ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/92

ք. Երևան « 18 » 09 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԼՈՒՍԻ-ԱՐԵԳ» ՍՊԸ -ն**, ի դեմս տնօրեն **Հ.Մարտիրոսյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ Արմավիրի մարզի Ապագա համայնքում ոռոգման ջրի պոմպակայանի և միջտնտեսային ցանցի կառուցում»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Կողմերի միջև կնքվող ֆինանսական միջոցների առկայության մասին լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 90 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին (հավելված 5) և ծավալաթերթին (հավելված 1) համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է

www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը **կազմում է 21,499,998 (քսանմեկ միլիոն չորս հարյուր ինսունինը հազար ինը հարյուր ինսունութ) ՀՀ դրամ, որից 3,583,333 (երեք միլիոն հինգ հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:**

5.1.1 Պայմանագրի գնից՝ **մինչև 5,374,999 (հինգ միլիոն երեք հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր ինսունինը) ՀՀ դրամը**, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[1]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը

խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[1] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[3] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում,

պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է **7 էջից,** կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5, N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[4]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	<<Լուսի-Արեգ>> ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,	ք.Երևան Շիրակի 82
Կ.Ուլնեցու 31	Կոնվերս բանկ ՓԲԸ
ՀՎՀՀ՝00846441	Հ/Հ 1930055884650100
Հ/Հ՝ 900018001231	ՀՎՀՀ 08805672
Կենտրոնական գանձապետարան	Հ.Մարտիրոսյան
Գործադիր տնօրեն	
Աշոտ Կիրակոսյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված թիվ 1
« 18 » « 09 » 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/92 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

«ՀՀ Արմավիրի մարզի Ապագա համայնքում ոռոգման ջրի պոմպակայանի և միջտնտեսային ցանցի կառուցում»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/հ	Գնացուցակների NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուր արժեքը միավորի համար	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6	7
1. Ապագայի պ/կ-ի ստորգետնյա մաս						
Հողային աշխատանքներ						
1.1	1-57	III կարգի բնահողի մշակում	մ^3	95.0	0.60	56.68
1.2	1-55	I կարգի բնահողի մշակում	մ^3	173.0	0.35	60.92
1.3	1-57	III կարգի բնահողի մշակում	մ^3	79.0	0.60	47.13
1.4	1-967	Հակադարձ լիցք փափուկ բնահողից	մ^3	8.4	0.97	8.14
1.5	1-256	Հակադարձ լիցք	մ^3	148.6	0.055	8.21
1.6	1-969	Ավելցուկ բնահողի հարթեցում տեղում	մ^3	183.90	1.31	240.47
1.7	37-76-2	Ավազա-կոպիճային նախապատրաստական շերտ h=10սմ	մ^3	4.7	7.50	35.3
1.8	1-967	Նախապատրաստական շերտ փափուկ բնահողից h=10սմ	մ^3	8.40	0.97	8.14
1.9	1-1218	Քարե լիցք(քարերը ծ=0.2-0.5մ չափերի)	մ^3	25.0	3.24	80.90
Տեխնոլոգիական մաս						
1.10	6-30	Ագրեգատի հիմքի տակի և խարսխային հենարանների բետոնի տեխադրում	մ^3	14.60	100.89	1473.00
1.11	6-30	Սողնակների և հակադարձ կափույրների տակի բետոն B15.W4	մ^3	0.50	100.49	50.25
1.12	22-363	Ներծծման 500-300 մասի ձագար	կգ	42.2	1.37	57.76
1.13	39-1	Ընդունիչ ցանց ներծծման խողովակի D=500մմՓ8 AII L=30սմ. մայլը 10սմ	տ	0.0060	707.70	4.2
1.14	22-363	Անցումային խցուկ D=300մմ 2հատ	կգ	131.00	1.37	179.31
1.15	9-153	Հենարանների մետաղական	տ	0.042	712.40	29.92

1	2	3	4	5	6	7
1.15	9-155	կոնստրուկցիա	մ	0.042	712.40	29.92
1.16	22-363	Էլեկտրաեռակցվող պողպատե ձևավոր մասեր	կգ	386.0	1.37	528.35
1.17	9-46	Մետաղական աստիճանի տեղադրում	տ	0.063	823.72	51.89
1.18	9-47	Մետաղական աստիճանի տեղադրում	տ	0.038	776.91	29.21
1.19	9-122	Բակի տեղադրում 1հատ	տ	0.030	787.59	23.63
1.20	22-73	D= 426*5մմ, պողպատե խողովակների մոնտաժում փորձարկումով	մ	4.00	42.61	170.45
1.21	22-71	D= 325*5մմ, պողպատե խողովակների մոնտաժում փորձարկումով	մ	150.00	32.77	4915.74
1.22	22-66	D=108*4մմ պողպատե խողովակների մոնտաժում փորձարկումով	մ	12.00	7.08	84.90
1.23	22-64	D=57*3մմ պողպատե խողովակների մոնտաժում փորձարկումով	մ	3.00	2.93	8.80
		Ներկման և հիդրոմեկուսացման աշխատանքներ				
1.24	22-586 q=0,5	Պողպատե խողովակների ուժեղացված հիդրոմեկուսացում D=400մմ	մ	2.00	2.50	5.00
1.25	22-584 q=0,5	Պողպատե խողովակների ուժեղացված հիդրոմեկուսացում D=300մմ	մ	120.00	1.87	224.57
1.26	15-657 շուկ.	Մետաղական կոնստրուկցիաների և խողովակների ներկում	$100մ^2$	0.750	162.36	121.77
1.27	41-31	Պատերի ուժեղացված հիդրոմեկուսացում	$100մ^2$	0.936	145.95	136.61
		2. Ապագայի պ/կ-ն վերգետնյա մաս				
		Կոնստրուկտորական մաս հիմքերի ե/բ էլեմենտներ				
2.1	6-20	Բետոնե հիմքի իրականացում B20	$մ^3$	46.00	61.59	2833.18
2.2	37-705 շուկ.	Ե/բետոնե հատակի իրականացում B20	$մ^3$	3.60	55.30	199.09
2.3	37-728	Ամրանի տեղադրում և արժեքը	կգ	255.71	0.637	162.77
2.4	6-106	Միաձույլ ե/բետոնե մեջդիրի կառուցում B20 բետոնից	$մ^3$	0.20	108.51	21.702
2.5	Ինֆոր.	Ամրան A 500c դասի	տ	0.008	432.18	3.46
2.6	Ինֆոր.	Ամրան Ac I դասի	տ	0.005	531.22	2.656
2.7	9-1 Ինֆոր	Մետաղական կարկասի տեղադրում	տ	1.475	810.14	1194.96
2.8	9-94 Ինֆոր	Մետաղական կավարամածի տեղադրում	տ	0.258	792.43	204.45
2.9	15-613	Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում 2 անգամ	$100մ^2$	0.45	88.26	39.717
2.10	9-29.9-24 q=0.5	Պրոֆիլավոր ցիկապատ թիթեղի δ= 0,55մմ հաստությամբ,ալիքի	$մ^2$	95.0	7.91	751.18
2.11	26-50	Մետաղական ցանցի 4մմ տեղադրում	$մ^2$	64.80	1.437	93.09
2.12	9-49	Մետաղական դարպասի տեղադրում	տ	0.19	902.3	168.73
2.13	15-613	Մետաղական կոնստրուկցիաների	$100մ^2$	0.14	88.26	12.356

1	2	3	4	5	6	7
2.13	13-613	յուղաներկում 2 անգամ	100մ	0.14	88.20	12.350
2.14	37-705 շուկ.	Ե/բետոնե հատակի իրականացում B20	մ^3	1.70	55.30	94.01
2.15	37-728	Ամրանի տեղադրում և արժեքը	կգ	174.53	0.590	102.92
		3. Ապագայի պ/կ-ի հիդրոմեխանիկական սարքավորումներ				
		Տեխնոլոգիական մաս				
3.1	7-282-2m շուկա	D630-90 տիպի պոմպի տեղադրում	հատ	1.00	1003.39	1003.39
3.2	7-297-1 շուկա	Վակում պոմպի տեղադրում ВВН-1.5 էլեկտրոսնուցմամբ 7լ/վ ջրի քանակով,	հատ	1.00	340.96	340.96
3.3	16-143 շուկա	Հակադարձ կափույր 19ч21р $D_{պ}$=200, $P_{պ}$=1ՄՊա	հատ	1.00	144.10	144.10
3.4	22-377 շուկա	30ч6бр սողնակ $D_{պ}$=200, $P_{պ}$=1.0ՄՊա	հատ	1.00	133.98	133.98
3.5	22-370 շուկա	30ч6бр սողնակ $D_{պ}$=100, $P_{պ}$=0.6ՄՊա	հատ	1.00	38.53	38.53
3.6	22-368 շուկա	30ч6бр սողնակ $D_{պ}$=50, $P_{պ}$=1.0ՄՊա	հատ	2.00	19.97	39.95
3.7	22-389 գ=0.5	Ճկուն միացում $D_{պ}$=200, $P_{պ}$=1.0ՄՊա	հատ	1.00	60.00	60.00
3.8	22-438	Պողպատե կցաշուրթ Dպ=200մմ, Pպ=1.0ՄՊա	հատ	4.00	22.94	91.75
3.9	22-431	Պողպատե կցաշուրթ Dպ=100մմ, Pպ=0.6ՄՊա	հատ	2.00	7.06	14.121
3.10	22-429	Պողպատե կցաշուրթ Dպ=50մմ, Pպ=0.6ՄՊա	հատ	4.00	4.11	16.46
3.11	18-227 շուկա	Մանոմետր 0.6 Н-1	հատ	1.00	5.13	5.13
		4. Ապագայի պ/կ-նի էլեկտրաուժային սարքավորումներ և մալուխներ				
4.1	8-481-8 շուկա	Ասինքրոն էլեկտրաշարժիչների կարճ միացված փաթույթով, АИР355S6	հատ	1.00	3513.9	3513.89
4.2	8-481-25 շուկա	100 կվտ հզորության շարժիչների կարճ միացում 380 վ ցանցին	հատ	1.00	7.26	7.26
4.3	8-481-21շուկա	5.5 կվտ հզորության շարժիչների կարճ միացում 380 վ ցանցին	հատ	1.00	3.86	3.86
4.4	8-572-7 շուկա	Հիմնական պոմպի էլեկտրաշարժիչների ղեկավարման	հատ	1.00	310.24	310.24
4.5	8-572-7 շուկա	Վակումային պոմպի էլեկտրաշարժիչների ղեկավարման	հատ	1.00	142.10	142.10
4.6	8-574-4 շուկա	Արկղ ավտոմատ անջատիչներով 1*160Ա , 4*63Ա հոսանքի	հատ	1.00	66.7	66.67
4.7	8-149-2 շուկա	ՈՒժային մալուխ պղնձե ջիղերով ВВГ-1000 4x70 մմ^2	մ	60.00	20.69	1241.53
4.8	8-149-1	ՈՒժային մալուխ պղնձե ջիղերով ВВГ-660 4x4մ^2	մ	40.00	1.08	43.13
4.9	8-417-10 շուկա	Պոլիվինիլքլորիդային խողովակ ПВХ Φ 32մմ	մ	15.00	0.546	8.20
4.10	8-417-11 գ=1.2ընդ.	Պոլիվինիլքլորիդային խողովակ ПВХ Φ 100մմ	մ	30.00	1.24	37.14
4.11	շուկա	Ամրակներ խողովակները պատին ամրացնելու համար	հատ	25.00	0.077	1.93

1	2	3	4	5	6	7
5. Ապագայի պ/կ-նի էլեկտրալուսավորություն						
5.1	8-612-9 շուկա	Լուսավորության վահանակ ՇԿՍ 8503-УХЛ4 տեսակի1х25Ա	հատ	1.00	58.03	58.03
5.2	8-599-1 շուկա	Լուսատու երկու լյումինեսցենտային լամպերով 2х36Վտ հզորության ЛПО12-	հատ	4.00	7.18	28.73
5.3	8-603-1 շուկա	Պատի լուսատու НСП11-0.31 - 100տեսակի	հատ	3.00	5.18	15.53
5.4	8-591-1	Բաց տեղադրման միաբեռ անջատիչ 6Ա.220Վ	հատ	2.00	1.16	2.33
5.5	8-591-3	Բաց տեղադրման հերմետիկ անջատիչ 6Ա.220Վ	հատ	2.00	4.78	9.57
5.6	8-591-6	Բաց տեղադրման երկբևեռ խրոցակային վարդակների տեղադրում	հատ	2.00	2.09	4.18
5.7	Շուկա	Էլեկտրատաքացուցիչ 220Վ. 2ԿՎտ	հատ	2	38.59	77.175
5.8	Շուկա	Լումինեսցենտային լամպ	հատ	8	0.53	4.248
5.9	Ինֆոր	Շիկացման լամպ НБ-220-100	հատ	3.00	0.19	0.58
5.10	8-149-1	ՈՒժային մալուխ պղնձե ջիղերով ВВГ-660 3х2.5մ^2	մ	20.00	0.79	15.71
5.11	8-149-1	ՈՒժային մալուխ պղնձե ջիղերով ВВГ-660 2х4մ^2	մ	10.00	0.63	6.28
5.12	8-149-1 Շուկա	ՈՒժային մալուխ պղնձե ջիղերով ВВГ-660 2х1.5մ^2	մ	60.00	0.47	28.24
5.13	Ինֆոր	Բաց տեղադրման ճուղավորման տուփ	հատ	5.00	0.39	1.93
5.14	Շուկա	Մեկուսիչներ հաղորդագծի համար	հատ	20.00	0.15	3.00
5.15	Շուկա	Մեկուսիչ ժապավեն	կգ	0.20	2.32	0.46
6. Ապագայի պ/կ-նի Կոմպլեկտ տրանսֆորմատորային ենթակայան						
էլեկտրական սարքավորումներ						
6.1	ПЭСС 2	Կոմպլեկտ տրանսֆորմատորային ենթակայան արտաքին տեղադրման	կոմպ	1.00	2686.3	2686.27
	շուկա					
	ա)	10/0.4կՎ-ի մուտքի սարքավորում			0.0	0.00
	բ)	ուժային տր-որТМ-160/10, 10/0.4 կվ 160 ԿՎԱ			0.00	0.00
	գ)	0.4կՎ-ի բաշխիչ սարքավորում			0.0	0.00
	դ)	բաժանիչ РЛНДА-10/160, ПРН-10, շարժաբերով			0.0	0.00
6.2	8-613-2	Երկտարիֆային էլեկտր. հաշվիչ 380վ 5Ա	հատ	1.00	19.19	19.19

1	2	3	4	5	6	7
6.3	8-574-26 շուկա	Եռաֆազ ավտոմատ անջատիչ 380վ 400Ա	հատ	1.00	134.79	134.79
		Շինարարականական մաս				
6.4	7-767	Մետաղական հենարաններ անկյունակային պողպատից	կգ	97.30	0.720	70.04
6.5	6-2	Բետոն B12.5, F150, W4 դասի	$մ^3$	0.32	95.30	30.49
6.6	6-1	Բետոնե նախապատրաստական շերտ B7.5 դասի բետ.	$մ^3$	0.056	43.35	2.43
6.7	1-961	Փոսորակի մշակում հիմքերի համար	$մ^3$	0.40	2.57	1.03
6.8	1-968	Գրունտի ետլիցք	$մ^3$	0.40	1.074	0.43
		7. Պ/կայանի և ենթակայանի հողանցում				
՛7.1	8-472-9	Հողանցման էլեկտրոդ պողպատից , Φ12 մմ L=3.մ 6հատ	մ	16.00	0.88	14.14
՛7.2	8-472-7 Ինֆոր	Արտաքին հողանցման կոնտուր 40*4մմ շիցերտապողպատից	մ	50.00	1.22	60.89
՛7.3	8-472-2 Ինֆոր	Ներքին հողանցման կոնտուր 25*4մմ շիցերտապողպատից	մ	30.00	0.66	19.91
՛7.4	շուկ.	Հողանցման դողի բռնիչ K188	հատ	8.00	0.8	6.17
՛7.5	Ինֆոր	Դյուբել-մեղ 50x5 K-413	հատ	40.00	0.062	2.47
՛7.6	Ինֆոր	Գլիֆտալային էմալ սև N25	կգ	2.00	1.41	2.83
՛7.7	1-962	Խրամուղու փորում IV կարգի բնահողում	$մ^3$	10.00	4.53	45.30
՛7.8	1-969	Քանդած բնահողի ետլիցք, ավելցուկի հարթեցումով	$մ^3$	10.00	1.31	13.08
		8. Պ/կայանի մետաղական ցանկապատ				
		Հողային աշխատանքներ				
՛8.1	1-961	III կարգի բնահողի մշակում խրամուղում և փոսորակներում 1+0.9	$մ^3$	1.90	1.49	2.84
՛8.2	1-968	Ավելացած բնահողի հարթեցում ձեռքով	$մ^3$	1.90	1.07	2.04
՛8.3	11-5	Կոպիճային նախապատրաստական շերտ h=15սմ	$մ^3$	1.35	6.79	9.2
՛8.4	11-4 շուկա.	Խարամային ծածկույթ h=5սմ	$մ^3$	0.45	5.48	2.5
		Կոնստրուկտորական մաս				
՛8.5	6-1	Բետոնե նախապատրաստական շերտ B7.5 F150, W4 դասի	$մ^3$	0.220	76.67	16.87
՛8.6	6-20	Բետոն B12.5 F150, W4 դասի ժապավենային հիմքի համար	$մ^3$	0.60	87.20	52.32
՛8.7	6-129	Բետոն B12.5 F150, W4 դասի երիզի համար	$մ^3$	0.36	99.95	35.98
՛8.8	6-2	Բետոն B12.5, F150, W4 դասի կանգնակների հիմքի համար	$մ^3$	0.93	95.30	88.62
՛8.9	9-121 ինֆոր	Ցանկապատի մետաղական կառուցվացքի տեղադրում	տ	0.302	750.12	226.53
՛8.10	15-613	Մտոցների կառուցվացքի ներկում	$100մ^2$	0.200	88.54	17.71

1	2	3	4	5	6	7
		Ընդամենը	հազ. դր.			*25609.85*
		ԱԱՀ - 20%	*հազ. դր.*			*5122.0*
		Ընդամենը	*հազ. դր.*			*30731.8*

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արմավիրի մարզի Ապագա համայնք հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Լուսի-Արեգ ՍՊԸ
ք.Երևան Շիրակի 82
Կոնվերս բանկ ՓԲԸ
ՀՀ 1930055884650100
ՀՎՀՀ 08805672
Հ. Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

« 18 » 09 Հավելված թիվ 2
2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/92 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
2	**« ՀՀ Արմավիրի մարզի Ապագա համայնքում ոռոգման ջրի պոմպակայանի և միջտնտեսային ցանցի կառուցում »,**	*ժամկետի հաշվարկն կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*	*90 օր տևողությամբ*
ԸՆԴԱՄԵՆԸ		*ժամկետի հաշվարկն կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*	*90 օր տևողությամբ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Լուսի-Արեգ>> ՍՊԸ
ք.Երևան Շիրակի 82
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930055884650100
ՀՎՀՀ 08805672
Հ.Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

«18» 09

Հավելված N 3
2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/92 ծածկագրով պայմանագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231133/503	պոմպային կայանների կառուցման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Լուսի-Արեգ>> ՍՊԸ
ք.Երևան Շիրակի 82
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930055884650100
ՀՎՀՀ 08805672
Հ.Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« » 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/92** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԻՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/92** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման պայմանագրի համարը
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
«18» 09 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/92 ծածկագրով պայմանագրի

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Լուսի-Արեգ>> ՍՊԸ
ք.Երևան Շիրակի 82
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930055884650100
ՀՎՀՀ 08805672
Հ.Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 6
« » _____20 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/92** ծածկագրով պայմանագրի*

Պատվիրատու	Կատարող
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հ/հ _____	հ/հ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »_____ 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Սույնով Պատվիրատուն և ՀՀ, _____ մարզի _____ համայնքը, մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ _____ պայմանագրի **3.2.3** կետի պահանջները, կազմեցին սույն **ԱԿՏ-ը** հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, ՀՀ, _____ մարզի _____ համայնքի հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից Նախագծով նախատեսված տարածքը:

Տարածքը հանձնեց	Տարածքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.